



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

№ ԱԽ-6-Ե-7  
2018թ.

**Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

*նախագահությամբ՝*

*Ա. Սկրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝*

*Ա. Բաբայանի, Գ. Բաղիրյանի,  
Ռ. Բարսեղյանի, Ա. Խաչատրյանի,  
Մ. Հարթենյանի, Գ. Ղազինյանի,  
Ս. Չիչոյանի, Վ. Ստեփանյանի,  
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

*քարտուղարությամբ՝*

*Գ. Նիկողոսյանի*

2018 թվականի մարտի 16-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացրած թեկնածությունը և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի 122-րդ, 123-րդ հոդվածներով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հավանություն տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար Հարություն Սենեքերիմի Մանուկյանի թեկնածությանը:

2. Հարություն Սենեքերիմի Մանուկյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝

**Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**